

Ֆինանսական օգնության ծրագրերի ամփոփում

Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ նկարագրված են ֆինանսական օգնության ծրագրերը, որոնք հասանելի են չափահավաքված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդների համար, որոնք բավարարում են որոշակի պահանջներն ըստ եկամտի՝ Dignity Health-ի կողմից ստացած անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար վճարելու համար: Չափահավաքված հիվանդը՝ դա այն անձն է, որը չունի բժշկական ապահովագրություն՝ չի օգտվում մասնավոր ապահովագրությունից կամ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրից, և որն իրավունք չունի փոխհատուցում ստանալու հիվանդանոցային հաշվի համար: Ոչ բավարար ապահովագրություն ունեցող հիվանդը, դա այն անձն է, որն ունի բժշկական ապահովագրություն, սակայն ունի բարձր հիվանդանոցային հաշիվներ, որոնք մասամբ փոխհատուցվում են ապահովագրական ընկերության կողմից:

Անվճար խնամք՝

• Եթե դուք չափահավաքված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է մինչև 250%, դուք կարող եք անհատույց հիվանդանոցային ծառայությունները ստանալու իրավունք ունենալ:

Զեղչված խնամք

• Եթե դուք չափահավաքված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է 250-350%, ապա դուք կարող եք իրավունք ունենալ ձեր հիվանդանոցային ծառայությունների հաշիվները նվազեցնել մինչև այն առավել մեծ հիմնավորված գումարը, որը կարող է վճարվել պետության կողմից, որը սովորաբար վճարվում է Medicare-ի կողմից նմանատիպ ծառայությունների համար:

• Եթե դուք չափահավաքված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է 350-500%, ապա դուք կարող եք իրավունք ունենալ ձեր հիվանդանոցային ծառայությունների հաշիվները նվազեցնել մինչև կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed)՝ Դաշնային օրենքով սահմանված գումար, որն արտացոլում է այն գումարը, որը փոխանցվում է հիվանդանոց մասնավոր ապահովագրական ընկերություններից և Medicare-ից (ներառյալ համավճարները և չփոխհատուցվող նվազեցման գումարները) անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար:

Եթե դուք մեր Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնություն ստանալու իրավունք ունեք, ապա դուք պարտավորված չեք լինելու վճարել ավելին, քան ստորև նկարագրված կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed): Որակավորվելու դեպքում դուք կարող եք նաև առանց տոկոսագումարի ընդլայնված վճարման պլանի համար դիմել:

Դուք երբևիցե պարտավորված չեք լինելու կանխավճար կատարել կամ այլ վճարային մեխանիզմներից օգտվել՝ շտապ օգնություն ստանալու համար: Հիվանդանոցի Ֆինանսական օգնության քաղաքականության և ֆինանսական օգնության հայտատուների անվճար պատճենները հասանելի են

հիվանդանոցի ստորև նշված վեբ կայքում կամ մուտքի մոտ գտնվող ընդունման կետերում: (Հետևեք “Admitting” ընդունման կետ, կամ “Registration” գրանցման կետ, նշաններին): Այդ փաստաթղթերի պատճեններն ըստ պահանջի կարող են նաև փոստով ուղարկվել ձեզ, եթե զանգահարեք ձեր հիվանդանոցի Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին ստորև նշված հեռախոսահամարով:

Traducción disponible: Այդ փաստաթղթերը կարող եք նաև ձեր բերել իսպանական և այլ լեզուներով ձեր հիվանդանոցի վեբ կայքում, հիվանդանոցի ընդունման կետում կամ զանգահարելով հիվանդանոցի հեռախոսահամարով

Dignity Health-ի Ֆինանսական խորհրդատուները կարող են պատասխանել ձեր հարցերին, տրամադրել տեղեկատվություն մեր ֆինանսական օգնության քաղաքականության մասին և օգնել ձեզ ֆինանսական օգնության համար դիմելու գործընթացին: Մեր աշխատակազմը գտնվում է հիվանդանոցի ընդունման կետում, որտեղ կարող եք զանգահարել նաև ստորև նշված հեռախոսահամարով:

Mercy General Hospital 4001 J St, Sacramento, CA 95819 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 916-389-8626
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 888-488-7667 | www.dignityhealth.org/sacramento/paymenthelp

Mercy Hospital of Folsom 1650 Creekside Dr, Folsom, CA 95630 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 916-983-7512
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 888-488-7667 | www.dignityhealth.org/sacramento/paymenthelp

Mercy San Juan Medical Center 6501 Coyle Ave, Carmichael, CA 95608 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 916-536-3053
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 888-488-7667 | www.dignityhealth.org/sacramento/paymenthelp

Methodist Hospital of Sacramento 7500 Hospital Dr, Sacramento, CA 95823 |
Ֆինանսական խորհրդատվության բաժին 916-423-6199 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667
www.dignityhealth.org/sacramento/paymenthelp

Sierra Nevada Memorial Hospital 155 Glasson Way, Grass Valley, CA 95945 |
Ֆինանսական խորհրդատվության բաժին 530-274-6758 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667
www.dignityhealth.org/sacramento/paymenthelp

Woodland Healthcare 1325 Cottonwood St, Woodland, CA 95695 |
Ֆինանսական խորհրդատվության բաժին 530-662-3961 ext. 4559
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 888-488-7667 | www.dignityhealth.org/woodland/paymenthelp